Աղյուսակ 10

Բնակչության ավանդները բանկային համակարգում[1]

տարեվերջին

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Բանկային հաստատությունների քանակը*, միավոր	35	211	207	208	216	230	273	249	248	256	294
Բանկերում սպասարկվող ֆիզիկական անձինք, հազ. մարդ	360	382	373	135	385	333	326	306	372	453	666
Ավանդների գումարը, մլն դրամ	15849	19614	32955	35361	30685	46734	54707	59108	70899	51375	96273
Ավանդի միջին չափը, դրամ	4403	5135	8835	39675	79701	140342	167813	193163	190589	179636	144554
Ավանդի միջին չափը բնակչության մեկ շնչի հաշվով, դրամ	422	522	873	1411	8073	12295	17015	18397	22085	25333	29922

* Բանկերի գլխամասերի և դրանց մասնաճյուղերի քանակը:

Բնակչության շրջանում բանկային համակարգի վստահության և բանկային համակարգի հուսալիության բարձրացումը նախադրյալներ կարող է ստեղծել ֆինանսական գործիքների միջոցով խնայողությունները վերածելու ներդրումների, ինչը լուրջ խթան և նյութական բազա կհանդիսանա տնտեսության զարգացման, հետևաբար, նաև բնակչության եկամուտների ավելացման և կենսամակարդակի բարձրացման համար:

ԱՆՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Հայկական կրթական համակարգն ունի 1600 տարվա պատմություն և ավանդաբար այն բարձր է գնահատվել:

Հայաստանի ներկա կրթական համակարգի հիմքերը դրվել են Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակ և հետագայում զարգացում ապրել խորհրդային շրջանի 70 տարիների ընթացքում: Խորհրդային կրթական համակարգն իր բոլոր թերություններով հանդերձ, հզոր համակարգ էր՝ ընդհանուր միջնակարգ կրթություն ապահովող ենթահամակարգով, ինչը հնարավորությունն էր տալիս ԽՍՀՄ-ին առաջնային դիրք զբաղեցնել գիտական հետազոտությունների բնագավառում և ստեղծել վերակառուցման նյութական ու կադրային նախադրյալներ, որոնք անհրաժեշտ էին շուկայական տնտեսությանն անցման ճանապարհին:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանը կանգնեց մի շարք դժվարությունների առջև՝ ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական: Մի կողմից կրթական համակարգը պետք է դիմակայեր անցման շրջանի աննախադեպ դժվարություններին, մյուս կողմից՝ շատ կարճ ժամանակահատվածում պետք է բավարար չափով համապատասխաներ նոր սոցիալական և տնտեսական պահանջներին:

1990-ական թթ. ի վեր ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում կատարվել են արմատական վերափոխումներ:

Արմատավորվել է վճարովի ուսուցման համակարգը, պետական ուսումնական հաստատություններին զուգահեռ գործում են ոչ պետական կրթական հաստատություններ, ընդունվել են ոլորտը կարգավորող օրենսդրական հիմնարար ակտեր, փաստաթղթեր և որոշումներ, մեկնարկել է ԲԿԵՏ (Բարձրագույն Կրթության Եվրոպական Տարածք) ինտեգրման գործընթացը:

ՀՀ կրթական համակարգը պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է[2]:

Կրթական համակարգի կառուցվածքից, կրթական հաստատություններից, դրանց կողմից մատուցվող բարձրորակ կրթական ծառայություններից է կախված ամբողջ հասարակության զարգացումը ժամանակակից աշխարհում:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում «կրթական համակարգ» հասկացության մեջ համակցվում են հետևյալ օբյեկտները՝ կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների փոխհարաբերությունների ամբողջությունը, կրթությունն իրականացնող հաստատությունները, ինչպես նաև դրանց կառավարման մարմինները: Այսպիսով կրթական համակարգը կառավարվող ցանց է՝ հագեցած կրթական գործունեությամբ, կրթական գործընթացով, կանոնակարգված ծրագրերով, գործընթացի մասնակիցների փոխհարաբերություններով: Կրթական հաստատությունների ցանցը կրթական համակարգի կարևորագույն բնութագրիչներից է:

Բարձրագույն կրթությունն իրականացվում է տարբեր ուսումնական հաստատություններում: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ ուսումնական հաստատությունը պետական հիմնարկ է կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագրեր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

ՀՀ-ում գործում են տարբեր բուհական հաստատություններ՝ համալսարաններ, ակադեմիաներ, ինստիտուտներ, կոնսերվատորիա:

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 75), 2004 (էջ 87), 2006 (էջ 88):

[2] «Կրթության մասին »ՀՀ օրենքը, հոդված 8, էջ 10:

Կրթության ոլորտի վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներն են համարվում 10 հազ. բնակչի հաշվով ուսանողների թիվը, բուհերում սովորողների ընդհանուր թվաքանակը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման աստիճանը և մեկ դասախոսի հաշվով ուսանողների թվաքանակը:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի ամենամյա զեկույցների համաձայն, աշխարհում հստակ առանձնացվել է երկրների մի խումբ, որոնք առաջատար դիրք են զբաղեցնում մասնագիտական կրթության ոլորտում. դրանք, առաջին հերթին, տնտեսապես զարգացած երկրներն են:

Այդ ցուցանիշներով աշխարհում առաջատարներն են ԱՄՆ-ն և Կանադան: Այսպես՝ 1990-ականի վերջերին Կանադայում 10 հազ. բնակչի հաշվով ուսանողների թիվը հասնում էր շուրջ 700-ի, ԱՄՆ-ում՝ 540-ի[1]:

Մեր հանրապետությունում 2003-2004թթ. 10 հազար բնակչին ընկնող ուսանողների թիվը կազմել է՝շուրջ 243, որից պետական բուհերում՝ 174[2]:

ՀՀ-յան պետական բուհերում սովորող ուսանողների թվաքանակը 10 հազ. բնակչի հաշվով ներկայացված է գծապատկեր 1-ում:

Մեր հանրապետությունում մասնագիտական կադրերի պատրաստումը իրականացվում է հիմնականում պետական բուհերի կողմից, որտեղ սովորում է ուսանողների մեծ մասը: Պետական բուհերի հետ մեկտեղ գործում են նաև ոչ պետական բուհեր:

1997-2004թթ. բարձրագույն կրթության հիմնական ցուցանիշների դինամիկան կարելի է ներկայացնել թիվ 1 աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 1

ՀՀ բարձրագույն կրթության հիմնական ցուցանիշների դինամիկան 1997- 2004թթ.[3]

Ցուցանիշները	Տարիները					
	1997	1999	2001	2002	2003	2004
Բարձրագույն ուսումնական հաստատություններ, միավոր	103	98	91	92	93	88
այդ թվում՝ պետական	16	16	20	20	20	20
ոչ պետական	87	82	71	72	73	68
ԲՈՒՀ-ում սովորողների թիվը, հազար մարդ	56.2	61.7	65.6	72.3	77.9	85.1
այդ թվում՝ պետական՝	36.0	39.8	47.4	54.1	55.9	62.5
ոչ պետական	20.2	21.9	18.2	18.2	22.0	22.6
ԲՈՒՀ-երի շրջանավարտների թիվը, հազար մարդ	11.5	11.2	7.2	10.6	11.7	12.3
այդ թվում՝ պետական	8.6	7.8	4.6	7.7	8.2	9.1
ոչ պետական	2.9	3.4	2.6	2.9	3.5	3.2
ԲՈՒՀ-երի ՊԴԿ թվաքանակը, մարդ ընդամենը	-	7389	7675	8116	8365	8521
այդ թվում՝ պետական	-	5617	5917	6304	6628	6884
ոչ պետական		1772	1758	1812	1737	1637

Աղյուսակի տվյալների համաձայն 2003-2004 ուսումնական տարում, 1997թ. համեմատությամբ, թեպետ բուհերի ընդհանուր թիվը 103-ից նվազել է մինչև 88, սակայն բուհերում սովորողների թվաքանակն ավելացել է 51.4%-ով՝ կազմելով 85.1 հազար մարդ: Այդ աճը հիմնականում պայմանավորված է պետական բուհերում սովորողների ավելի քան 73.6% աճով: Ինչ վերաբերում է ոչ պետական բուհերին, ապա ուսումնասիրվող ժամանակահատվածում բուհերի թիվը 87-ից կրճատվել է մինչև 68, իսկ դրանցում սովորողների թվաքանակն ավելացել է՝ 20.2 հազարից դառնալով 22.6 հազար մարդ:

Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանում բուհերի ընդհանուր թվաքանակը 1993-1994 ուսումնական տարում կազմել է 626, իսկ 2003-2004թթ.՝ 1046[4]: 2004թ.-ին ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների թվաքանակը 1980թ. համեմատությամբ (58.1 հազար) կրճատվել է գրեթե 34%-ով, և չնայած վերջին շրջանում տարեցտարի ավելանում է բուհերում սովորողների թվաքանակը, այն դեռևս չի հասել նախկին մակարդակին[5]: Այս երևույթը բացատրվում է երկրում տնտեսական կարգի փոփոխությամբ, արժեքների վերագնահատմամբ:

Ոչ պետական կրթական հիմնարկները տնտեսապես զարգացած երկրների մեծ մասում հանդիսանում են մասնագետների պատրաստման համակարգի կարևոր բաղադրամասը: ԱՄՆ-ում բարձրագույն կրթության մասնավոր հատվածի բաժինը ընդհանուր թվի մեջ կազմում է 72.2 %, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում՝ 21.3 %, Ռումինիայում՝ 26.6%, Չեխիայի Հանրապետությունում՝ 0.5 %, Հունգարիայում՝ 13.9%, Ռուսաստանի Դաշնությունում՝ 37 %[6]:

Արտերկրում դրանց երկարատև գոյությունն ապացուցել է, որ բարձրագույն կրթության ոլորտում այլընտրանքային կրթական կառույցները լիովին կենսունակ են և կարող են հաջողությամբ լուծել ամենաբարդ սոցիալ-տնտեսական խնդիրները:

---

[1] Մ.Բաղալյան, Բարձրագույն կրթության զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում: , Երևան; Տնտեսագետ, 2006թ.; էջ 14:

[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004; ՀՀ ԱՎԾ, Երևան; 2004թ. էջ 80:

[3] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, 2005թթ.:

[4] Исследование и разработки в секторе высшего овразования.Статистический сворник. ВШЭ; 2005; стр.58:

[5] Մ.Բաղալյան, ԲԿ զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում; Երևան,: Տնտեսագետ, 2006թ.; էջ 14:

[6] Նույն տեղում; էջ 15:

Սակայն տնտեսապես զարգացած երկրների փորձը չի կարելի մեխանիկորեն կիրառել հայկական կրթական համակարգում, քանի որ բարձրագույն կրթության ոլորտում դեռևս չեն ձևավորվել դասական շուկայական հարաբերությունների պայմանները:

Անկատար է բուհերի օրենսդրական բազան, այն հետագա ճշգրտման և զարգացման կարիք ունի:

Ոչ պետական բուհերի կառավարման, տնտեսավարման և ֆինանսավորման, այդ թվում և հարկավորման հարցերին վերաբերող իրավաբանական ակտերը կայացման և զարգացման փուլում են: Հատկապես սուր է դրված սեփականության հիմնահարցը, քանի որ վարձակալական հարաբերությունների պայմաններում ոչ պետական բուհերի գոյատևումը բավականին դժվար է: Ոչ պետական բուհերն ավելի շատ կողմնորոշված են դեպի շուկա, արագաշարժ են ֆակուլտետների կազմակերպման առումով, առավել արագ են արձագանքում սպառողի պահանջներին:

Բարձրագույն կրթության դերի մեծացման և արմատական վերափոխման վկայությունն են 2004թ. գոյություն ունեցող 68 ոչ պետական ուսումնական հաստատությունները, և դա այն դեպքում, երբ 1990թ. գործում էին միայն 16 բուհեր, ընդ որում՝ բոլորն էլ պետական:

Պետական լիցենզիա ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցուցանիշները ներկայացված են թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2

ՀՀ ոչ պետական բուհերի հիմնական ցուցանիշները[1]

Ցուցանիշներ	1997-1198	1998-1999	1999-2000	2000-2001	2001-2002	2002-2003	2003-2004	2004-2005
Ոչ պետական բուհերի թիվը(միավոր)	87	84	82	71	71	72	73	68
Ուսանողների թիվը ոչ պետական բուհերում (հազար մարդ)	20.2	21.2	21.9	17.1	18.2	18.2	22.0	22.6
%-ով՝ բուհերում սովորողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ	**35.9**	**35.5**	**34.4**	**28.2**	**27.7**	**25.2**	**29.7**	**26.6**
Ընդունված ուսանողների թիվը (հազար մարդ)	6.4	5.1	5.1	4.0	5.6	5.6	6.7	5.9
Ավարտած ուսանողների թիվը (հազար մարդ)	2.9	3.4	3.4	3.0	2.6	2.9	3.5	3.2
ՊԴԱ թվաքանակը (մարդ)	-	-	-	1772	1758	1812	1737	1637

2004-2005թթ. ուսումնական տարում ոչ պետական բուհերի թիվը գերազանցում է պետական բուհերի թիվը 3.4 անգամ (20 և 68), սակայն այստեղ սովորողների թվաքանակը մոտ 2.8 անգամ պակաս է պետական բուհերում սովորողների թվից կամ կազմում է բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների 26.6%-ը:

Բարձրագույն կրթության ոչ պետական հատվածը գլխավորապես հիմնվում է պետական բուհերում ձևավորված գիտամանկավարժական կադրերի վրա, որոնք ոչ պետական բուհերում աշխատում են համատեղության կարգով:

Վերլուծությունը վկայում է, որ այսօր ՀՀ-ում ոչ պետական ուսումնական հաստատությունները որոշիչ դեր չեն խաղում բարձրագույն կրթության շուկայի ձևավորման գործում և դեռևս աճելու ու զարգանալու կարիք ունեն: Սակայն բարձագույն կրթության շուկան չի կարելի կայացած և ձևավորված համարել՝ առանց վերջիններիս գոյությունը հաշվի չառնելու:

Մասնագիտական կրթության որակի բարձրացման և արդիական բովանդակության ապահովման կարևոր միջոցներից մեկը պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ինստիտուտի և կայուն համակարգի առկայությունն է:

Կրթության ոլորտում աշխատանքն իրենից ներկայացնում է հասարակության կադրային ներուժի պլանաչափ գիտամանկավարժական գործունեություն՝ ուղղված կրթական ծառայությունների մատուցմանը, աճողսերնդի ուսուցմանը և դաստիարակմանը:

Քանի որ այս ոլորտի աշխատանքն ուղղված է մարդուն, դրան բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- ✓ բարդ է, ունի մտավոր և մանկավարժական բնույթ,
- ✓ պահանջում է ստեղծագործական գործունեության բարձր մակարդակ,
- ✓ աշխատանքի արդյունքները կրթական ծառայություններ են, որոնք անբաժան են մարդուց:

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական անձնակազմի քանակական ցուցանիշները արտահայտված են աղյուսակ 3-ում:

2004թ. տվյալներով՝ ՀՀ-ում ՊԴԿ-ը ներառում է 8521 մարդ, որը 1991թ. համեմատությամբ ավելացել է 52.1%-ով (5603 մարդ)[2]:

Անընդհատ մեծանում է բարձրագույն դպրոցի գիտական ներուժը: Այսպես, եթե 1980թ. գիտությունների դոկտորների թիվը ամողջ ԽՍՀՄ-ում կազմում էր ողջ ՊԴԿ-ի 4.6%-ը, իսկ գիտ.թեկնածուների թիվը՝ 45.3%-ը, այդ ցուցանիշները 2004թ. տվյալներով համապատասխանաբար կազմում են՝ 8.3% և 36.5%[3]:

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002-2005թթ.:

[2] Մ.Բաղալյան,ԲԿ զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում: Երևան; 2006թ. էջ16:

[3] Մ.Բաղալյան,ԲԿ զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում: Երևան; 2006թ. էջ16:

Աղյուսակ 3

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակը բարձրագույն ուսումնական հաստատություններում[1]

	Պետական բուհեր			Ոչ պետական բուհեր		
	02/03	03/04	04/05	02/03	03/04	04/05
ՊԴԿ-ի թվաքանակը						
Նրանցից ունեն՝	6304	6628	6884	1812	1737	1637
Գիտական աստիճան՝						
գիտ.դոկտորի	528	558	589	204	160	117
գիտ.թեկնածուի	2904	2442	2529	751	631	583
Գիտական կոչում՝						
պրոֆեսորի	689	622	715	316	186	146
դոցենտի	1750	1575	1907	487	394	368
Ընդհանուր թվաքանակից՝ այն դասախոսների թվաքանակը, որոնք աշխատում են համատեղ,	1057	1016	1208	522	594	667

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ բուհական և հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողները պարտավոր են ոչ պակաս, քան հինգ տարին մեկ, սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում[2]:

Օրենքի այս պահանջն իրագործելու համար դեռևս չկան անհրաժեշտ կառույցներ և իրավական ծրագրեր: Բուհերի ՊԴԿ-ի վերապատրաստման, որակավորման բարձրացման գործընթացը ներկայումս ունի տարերային բնույթ: Այդ գործին մեծապես նպաստում են ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունները և ակադեմիական փոխանակման ծառայությունները (TACIS, IREX, "Eurasia" Foundation, Open Society Institute, UNDP և այլն):

ՀՀ բուհերի ՊԴԿ-ի մասնագիտական որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթացի կարգավորման, առաջավոր փորձի փոխանակման, կրթության բովանդակության ու մեթոդների արդիականացման նպատակով ներկա փուլում անհրաժեշտ է բուհերի դասախոսների որակավորման բարձրացման՝ կանոնավոր գործող կառույցի ստեղծումն ու զարգացումը: Այդ կառույցի կարևորությունն ավելի է ընդգծվում՝ կապված Բոլոնիայի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու և ԵԲԿՏ ինտեգրվելու գործընթացների հետ:

Դեռևս 1968 թ-ից ԵՊՀ-ում գործել է բուհերի դասախոսների որակավորման բարձրացման ֆակուլտետ: Այդ ֆակուլտետի ունկնդիրների շարքերում կային ինչպես Հայաստանի, այնպես էլ ԽՍՀՄ մյուս հանրապետությունների բուհերից գործուղված մասնագետներ:

1990-ական թվականներին մասնագիտական կրթության համակարգի ընդհանուր ճգնաժամի հետևանքով խիստ նվազեց որակավորման բարձրացման ֆակուլտետի ունկնդիրների թիվը:

2002-2005թթ. ԵՊՀ լրացուցիչ կրթության բաժնի իրականացրած ծրագրերի շնորհիվ վերապատրաստման և որակավորման բարձրացման կուրսեր են անցել ԵՊՀ-ի 630 դասախոսներ, 53 վարչական աշխատողներ, ՀՀ այլ պետական բուհերի (այդ թվում նաև Արցախի պետական համալսարանի) 228 դասախոսներ, ՀՀ ոչ պետական բուհերի ՊԴԿ-ի 15 ներկայացուցիչներ[3]:

2005 թ-ից դասախոսների որակավորման բարձրացման ծառայություններ են մատուցում նաև ՀՀ մի շարք բուհեր (Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը):

ՊԴԿ-ի որակավորման բարձրացման կարիք ունեն գրեթե բոլոր բուհերը, սակայն առանձին վերցրած բուհի սահմանափակ միջոցներով այս գործի կազմակերպումը չի կարող արդյունավետ լինել:

Ուստի անհրաժեշտ է՝

- ՀՀ ԿԳՆ մասնագիտական կրթության վարչությունում ձևավորել առանձին աաշխատանքային խումբ կամ բաժին, որը կհետազոտի և կսահմանի որակավորման բարձրացման կարիք ունեցող մասնագիտությունների ցանկը, բարձրագույն կրթության կառավարման տարբեր օղակները ներկայացնող պատասխանատուների կազմը ֆակուլտետի դեկան, ամբիոնի վարիչ, ուսումնական վարչության ղեկավար, կիրավիրի արտասահմանյան հայտնի մասնագետներ, կհետազոտի ՀՀ բուհերի պահանջները մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման առումով:
- Կատարել աշխատանքի բաժանում տարբեր մասնագիտությունների գծով առաջատար դիրքեր զբաղեցնող բուհերի միջև:

Օրինակ, տեղեկատվական համակարգչային տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների վերապատրաստումը կարելի է կազմակերպել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, մանկավարժական գիտությունների ներկայացուցիչներինը՝ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում և այլն:

Խնդիրը սակայն, պետք է մնա ԿԳՆ ուշադրության, ընդհանուր իրավասության, ֆինանսական աջակցության ու հոգածության կենտրոնում և համակարգվի իրավական ակտերով ու որոշումներով: Ռուսաստանի

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005; ՀՀ ԱՎԾ; Երևան; 2005թ.:

[2] «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը; հոդված 19, կետ 6:

[3] ՀՀ մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության զարգացման հայեցակարգային մոտեցումներ; ՀՀ ԿԳՆ; Երևան; 2005 թ.:

Դաշնության ԿԳՆ պետական բուհերի դասախոսական կազմի մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով 2005թ. հատկացվել էր լրացուցիչ շուրջ 3 մլն. 120 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ֆինանսական լրացուցիչ միջոցներ[1]:

Սկզբնական փուլում բուհերի դասախոսների և ուսումնական գործընթացի կազմակերպիչների որակավորման բարձրացման գործում ընդհանուր առմամբ առաջնային կարող են լինել գիտելիքները եվրոպական կրթական համակարգի հիմնարար սկզբունքների, կրեդիտների փոխանցման միասնական համակարգի, որակի և գիտելիքների գնահատման եվրոպական ցանցի և այլ խնդիրների վերաբերյալ:

Վճարման ցածր մակարդակը բուհական համակարգում առաջ է բերում երկրորդային զբաղվածության անհրաժեշտություն, ինչը իր բացասական ազդեցությունն է ունենում դասախոսների գիտական գործունեության վրա:

2004թ. կրթության ոլորտի աշխատողների միջին աշխատավարձը, որը կազմել է 29164 դրամ, 1997 թ.-ի (5996 դրամ) համեմատությամբ, ավելացել է 4.9 անգամ, իսկ նախորդ՝ 2003 թ.-ի (19293 դրամ) համեմատությամբ՝1.5 անգամ[2]:

Կրթության ոլորտի աշխատողների միջին աշխատավարձի ցածր մակարդակը բացատրվում է ոլորտի բյուջետային ֆինանսավորմամբ, հետևաբար՝ բյուջետային միջոցների պակասով և սոցիալական ոլորտին հատկացվող միջոցների ցածր մակարդակով:

Բուհերին թույլատրված է ինքնուրույն սահմանել աշխատավարձի և պարգևատրումների մակարդակը՝ արտաբյուջետային միջոցների հաշվին:

Անհրաժեշտ է այդ խնդիրն ուսումնասիրել հանգամանորեն՝ օգտագործելով առևտրային կազմակերպությունների աշխատավարձի ձևավորման մեխանիզմը՝ հաշվի առնելով կրթական ոլորտի առանձնահատկությունները:

ՀՀ կրթական համակարգի գործունեության վրա ազդող կարևոր գործոններից է արդեն սկսված ժողովրդագրական անկումը, որն ըստ կանխատեսումների կշարունակվի նաև առաջիկա տարիներին:

Ժողովրդագրական անկումն արդեն անդրադարձել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների վրա, ինչն արտահայտվում է այդ հիմնարկներ հաճախող երեխաների թվաքանակի կտրուկ կրճատմամբ: 2000թ. ժողովրդագրական անկման հետևանքներն արտացոլվեցին նաև հանրակրթական դպրոցներում, ըստ առկա տվյալների՝ 2010թ. հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվաքանակը կկրճատվի մոտավորապես 44.06%-ով: Ստեղված ժողովրդագրական իրավիճակը կհանգեցնի բարձրագույն ուսումնական հաստատություններ դիմորդների թվի կրճատման:

ՀՀ բարձրագույն դպրոցի ներուժի արդյունավետ ուղղվածությունն ապահովելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ընդլայնել աշխատող և ազատված աշխատակիցների վերապատրաստումը, բացի այդ, ավելացնել ուսանողների թվաքանակը՝ սփյուռքահայ երիտասարդների և ԱՊՀ երկրների, ինչպես հայ, այնպես էլ օտարազգի երիտասարդների հաշվին:

Այսօր ՀՀ-ում կրթական գործընթացը կազմակերպվում է կրեդիտային համակարգի հիման վրա: Դրա նպատակն է լուծել կրթական ծրագրերի համեմատելիության և ուսանողների ակադեմիական շարժունակության խնդիրները: Կրեդիտային համակարգը թույլ է տալիս առավել մանրակրկիտ գնահատել ուսանողի աշխատանքային ծախսումներն առանձին առարկաների և ընդհանուր առմամբ կրթական ծրագրերի յուրացման ուղղությամբ ու առավել օբյեկտիվ և լիարժեք գնահատել նրան՝ ելնելով վաստակած կրեդիտների թվից:

Կրեդիտային համակարգի մշակման և ներդրման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը պայմանավորված են մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝

1. Մասնագիտական կրթության բազմաստիճան համակարգի զարգացմամբ և բարձրագույն դպրոցի համաեվրոպական կրթական համակարգի ինտեգրմամբ:

2. Կրեդիտային համակարգի կարևորագույն տարրերից մեկը կարելի է համարել ֆինանսականը: Այսինքն ուսման վարձը կարող է որոշվել կրեդիտների թվով:

Այսպիսով այս համակարգի ներդրումը հանգեցնում է կրթության ստացման անհատականացմանը՝ անհատական ուսումնական պլանի մշակմանը:



Գծապատկեր 1. Պետական բուհերում ուսանողների թվաքանակը (10.000 բնակչի հաշվով)

[1] Штелев Петер.Кредит под залог.http: //www.credits.ru/consumer.

[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005; ՀՀ ԱՎԾ; Երևան: 2005թ.:

Եզրակացություններ

21-րդ դարաշրջանի սկիզբը նշանավորվում է գլոբալ փոփոխություններով մարդկային գործունեության տարբեր ասպարեզներում, և կրթության ոլորտի բարեփոխումները կոչված են վճռական դեր խաղալ երրորդ հազարամյակի հիմնախնդիրները լուծելու գործընթացներում:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի հիմնախնդիրների շրջանակը չափազանց մեծ է, սակայն դրանց արդյունավետ լուծումը կարելի է կազմակերպել ռացիոնալ ձևով և հասնել զգալի հաջողությունների նույնիսկ կարճ ժամկետներում: Հայաստանի բարձրագույն կրթությունն արդի փուլում, շուկայական հարաբերությունների համատեքստում, արմատական լուրջ վերափոխումների կարիք ունի: Շուկայական հարաբերությունների անկատարությունն իր բացասական դերն է կատարում տնտեսության այս բնագավառի ավելի հարթ զարգացման և ձևավորման գործընթացներում: Դեռևս լիովին որոշված չեն պետության գործառույթները շուկայական հարաբերությունների կարգավորման հարցերում և շուկայական պայմաններում կրթական համակարգի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներում: Մի կողմից, մեծանում է պետության դերը բարձրագույն կրթության ոլորտի կառավարման ասպարեզում, մյուս կողմից, մրցակցությունը ստիպում է ուսումնական հաստատություններին դրսևորել որոշակի անկախություն իրենց առջև ծառացած ֆինանսատնտեսական խնդիրներն լուծելու համար:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգի մրցունակ լինելու և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանելու միակ գրավականը կրթության *որակն է:* Կրթության որակի ապահովումը համարվում է անհրաժեշտ փուլ բարձրագույն կրթության կառավարման գործընթացներում: Ինտեգրումը ԲԿԵՏ ենթադրում է *որակի ապահովման ազգային համակարգի* հիմնում: Սակայն, ՀՀ-ում չի եղել նման ծառայություն, այդ իսկ պատճառով առկա է փորձի բացակայություն: Ուստի անհրաժեշտ է կիրառել զարգացած երկրների փորձը, որոնք ունեն կայացած կրթական համակարգ և ժամանակի փորձությունն անցած որակի ապահովման հաջողված տարբերակներ: Սակայն ընդօրինակելով վերջիններիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել մեր երկրի ազգային առանձնահատկությունները:

Համակարգի մրցունակ լինելը կախված է նաև մի շարք այլ կարևոր գործոններից, ինչպիսիք են՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման մակարդակը, ուսումնական հաստատության ապահովվածությունը նյութատեխնիկական, ֆինանսական, տեղեկատվական ռեսուրսներով, որոնք նույնպես ուղղակիորեն կապված են կրթության որակի հետ:

ՀՀ բարձրագույն կրթության համակարգը մրցունակ կարգավիճակ ձեռք բերելու համար, այն պետք է զարգացնի *կանխատեսելիության կարողություն, նպատակասլացություն և նորարական գործունեություն:* Վերջին գործոնը չափազանց կարևոր է, քանի որ մրցակցությունը սերտորեն կապված է առաջընթացի և զարգացման հետ:

Հաջողակ լինելու համար շուկայական պայմաններում կարևոր գործոն է նաև ֆինանսական գործելակերպի մշակումը: Պետական դրամական միջոցների ճիշտ օգտագործումը և լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավումը չափազանց արդյունավետ ներգործություն կունենան համակարգի տնտեսական հարցերը կարգավորելու գործում:

Մի խոսքով, ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների աստիճանական իրականացումը և աջակցությունն, ինչպես նյութական, այնպես էլ բարոյական, կխթանեն կայուն և մրցունակ կրթական համակարգի ստեղծմանը:

ԼՈՒՍՅԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ դասախոս, տ.գ.թ., դոցենտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համակարգային ճգնաժամից ազատվելու համար պետական ապարատի կողմից պետք է ձևավորվի զարգացման որոշակի մոդել: Կառավարման մարմիններն այդ մոդելին պետք է հաղորդեն կոնկրետություն՝ տեխնիկա-տնտեսական հաշվարկների, խնդիրների, նպատակների տեսքով, որոնք ամրագրված կլինեն տարբեր օրենքներով, ինչպես նաև ընդունված որոշումների իրականացման համակարգով: Հայաստանի Հանրապետությունը կոմունիստական գաղափարախոսությանը հարիր տոտալ-պլանային տնտեսությունից ձերբազատվել է և շարժվում է դեպի շուկայական տնտեսության ստեղծումը: Այդ շարժման մեջ պետական կառավարումը ձեռք է բերում հատուկ նշանակություն:

Առանձին հեղինակներ տարբեր կերպ են դասակարգում շուկայական տնտեսության մոդելը: Այսպես, Է.Պ.Դունաևը առանձնացնում է շուկայական տնտեսության 3 հիմնական մոդել՝

1. լիբերալ,
2. սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության,
3. շուկայական տնտեսության սոցիալ-դեմոկրատական մոդել:

Դրա հետ մեկտեղ, նրանք պետության դերի նշանակությունը ուղղակիորեն կապում են համապատասխան մոդելի հետ: Ըստ նրանց, «պետության տնտեսական դերը էականորեն տարբեր է՝ կապված շուկայական